ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— հուլիսի 2023 թվականի №—Ա

«ԷԼԻՏՔՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷԼԻՏՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի ապրիլի 19-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու երեք հայտեր (այսուհետ՝ Հայտեր), որոնց համաձայն՝ Հայտերին կից ներկայացված 2015 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագրով Ընկերության մասնակից Հերմինե Իսրաելյանը իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 40 տոկոս բաժնեմասը վաճառել է Ընկերության 60 տոկոս բաժնեմասը տնօրինող Լարիսա Մկոյանին, 2020 թվականի դեկտեմբերի 1-ին Ընկերության միակ մասնակից Լարիսա Մկոյանը իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը վաճառել է Դավիթ Մկոյանին, 2022 թվականի ապրիլի 1-ին Ընկերության միակ մասնակից Դավիթ Մկոյանը իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը վաճառել է Հայկ Մկոյանին: Ընկերությունը միաժամանակ հայտնել է, որ հիշյալ գործարքները կնքվել են առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության համապատասխան կարգավորումների չիմացության պատճառով՝ հայցելով Հանձնաժողովի ներողամտությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված

Հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 26-ի №ԿՍ/34.2-Մ2-8/1371-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը 2023 թվականի հուլիսի 11-ի №01/11.1/6738-2023 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում Հայտերի վերաբերյալ առարկություններ չունի, կից ներկայացնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումն առ այն, որ վերջինս դրա վերաբերյալ ազգային անվտանգությանը կամ պետական շահին վնասելու տեսանկյունից առարկություններ չունի,

գ) Հայտերի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են: Պարզվել է նաև, որ Հայտերով նշված գործարքները Ընկերության կողմից կնքվել են Օրենքի 14-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված օրենքի ուժով դրանք առ ոչինչ (անվավեր) են: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ 2023 թվականի ապրիլի 19-ի գրությամբ ներկայացնելով Հայտերը և դրանցում նշված պայմանագրերը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, դրանք ուղղակիորեն չեն հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Հայտերով նշված գործարքներին:
2. Ընդունել ի գիտություն, որ Հայտերում նշված՝ 2015 թվականի օգոստոսի 26-ին, 2020 թվականի դեկտեմբերի 1-ին և 2022 թվականի ապրիլի 1-ին կնքված Ընկերության բաժնեմասերի օտարման վերաբերյալ գործարքները կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ (անվավեր) են:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2023թ.